ՏԻԳՐԱՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

1071—1081 ԹԹ. ԹՅՈՒՐՔԵՐԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄԸ ՓՈՔՐ ԱՍԻԱ ԵՎ ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թյուրքերի զանգվածային ներթափանցումը Փոքր Ասիա սկսվեց Մանազկերտի ճակատամարտից հետո, երբ իսպառ փլուզված էր բյուզանդական ռազմական, ինչպես նաև սահմանապահ համակարգը։ Օգտվելով բյուզանդական սահմանների թույլ պաշտպանվածությունից, Իրանի տարածքում թափառող օղուզա-թուրքմենական հրոսակները հետզհետե սկսեցին ներխուժել կայսրության հողեր։ Աղբյուրները վկայում են, որ Մանազկերտի ճակատամարտին հաջորդած տաս տարիների ընթացքում՝ մինչև 1081 թ., երբ գահ բարձրացած Կոմնենոսները սկսեցին քայլեր ձեռնարկել Փոքր Ասիայի վերանվաճման ուղղությամբ, սելջուկյան իշխանությունների կողմից չվերահսկվող այդ հրոսակները՝ զանազան սելջուկ և թուրքմեն ամիրաների գլխավորությամբ, արդեն հաստատվել էին Փոքր Ասիայի ոչ միայն ծայրամասային, այլև բազմաթիվ ներքին տարածքներում[1]։

Եթե մինչև 1071 թ. թյուրքական զանազան հրոսակախմբերը սելջուկյան պետությանը սահմանամերձ բյուզանդական տարածքները ասպատակման և թալանի ենթարկելով, որպես կանոն, միշտ վերադառնում էին խալիֆայություն, ապա Մանազկերտից հետո նրանք ոչ միայն հիմնավորապես հաստատվեցին Փոքր Ասիայում, այլև այդ հողերի վրա ձևավորեցին մի շարք պետական կազմավորումներ։

Այսպես Հայաստանի և Բյուզանդիայի հողերի վրա ձևավորվեցին Ռումի Սելջուկյանների, Արտուխյանների, Դանիշմենդյանների և այլ թուրքմենական ամիրայություններ։

Փոքր Ասիայում թյուրքերի սկզբնական ներթափանցման (մինչև 1081 թ.), բյուզանդական իշխանությունների հետ նրանց շրջումների և պետական միավորների առաջացման վերաբերյալ պատմական աղբյուրների տեղեկությունները սակավ են։

Կարելի է ասել, որ մուսուլման հեղինակներ Իմադ ադ-Դին ալ-Իսֆահանին (պահպանվել է նրա աշխատության համառոտ տարբերակը ալ-Բունդարիի «Զուբդաթ ան-նուսրա վա նուխբաթ ալ-ուսրա» անվամբ, XII դ.), Իբն ալ-Ասիրը («Ալքամիլ ֆի աթ-թարիխ» XIII դ.), Սադր ալ-Դին ալ-Հուսեյնին («Ախբառ ադ-դաուլա աս-սելջուկիյյա», XII դ.), Սիբտ իբն ալ-Ջոուզին («Միռ'աթ ազ-զաման, XIII դ.), ինչպես նաև ասորական պատմագիրներ Աբուլֆառաջը և Միքայել Ասորին, որոնք քաջատեղյակ են XI դարի 80-ականներից հետո Փոքր Ասիայում Ռումի սելջուկյանների և այլ թուրքմեն ամիրաների ծավալած գործողությունների մասին, մեզ ոչինչ չեն հաղորդում այդ տարածաշրջանում 1071—1081 թթ. ժամանակահատվածում վերջիններիս հաստատման գործընթացի մասին։ Ոչինչ չեն տալիս նաև, այսպես կոչված, բուն սելջուկյան պատմագրական աղբյուրները, գոնե գրանցից ամենահինը՝ Իբն Բիբիի «Սելջուկնամեն»։

Այս առումով մուսուլմանական աղբյուրների բացը որոշ չափով լրացնում են ժամանակի բյուզանդական հեղինակների՝ Միքայել Ատտալիատեսի, Հովհաննես Սկիլիցեսի Շարունակողի, Նիկեփոր Բրիենիոսի, Աննա Կոմնենայի, ինչպես նաև XII դ. հայ հեղինակ Մատթեոս Ուռհայեցու ընձեռած տեղեկությունները։

XI դարում Փոքր Ասիա թյուրքերի ներթափանցման և այդ շրջանի ժամանակագրությանը վերաբերող տարբեր ասպեկտներ քննության են առնվել Ժ. Լորանի, Կլ. Կահենի, Ս. Վրիոնիսի, Ի. Քաֆեսօղլուի, Ս. Բոռնազյանի և ուրիշների կողմից[2]։

Դեռ դարասկզբին Ժ. Լորանը իր աշխատություններում բյուզանդագիտության դիրքերից քննության է առել Ռումի սելջուկյանների պետության կազմավորման գործընթացը և նրա հարաբերությունները կայսրության հետ։

Պատմական աղբյուրների մանրամասն հետազոտություններ կատարելով՝ ֆրանսիացի անվանի արևելագետ Կ. Կահենը մի շարք արժեքավոր ուսումնասիրություններ ունի Փոքր Ասիա և Մերձավոր Արևելք թյուրքերի ներթափանցման սկզբնական փուլի ու սելջուկների պատմության զանազան խնդիրների շուրջ[3]։

1971 թ. լույս տեսավ ամերիկացի գիտնական Սպերոս Վրիոնիսի՝ Փոքր Ասիայում «միջնադարյան հելլենիզմի» անկման և աստիճանական թյուրքացման վերաբերյալ ծավալուն աշխատությունը, որը, ճիշտ է, հարուստ նյութ է պարունակում, սակայն շարադրված է հախուռն կերպով, և հեղինակը երբեմն հանգում է անհիմն եզրակացությունների։ Հատկապես վիճելի են Բյուզանդական կայսրության փլուզման գործընթացում հայերի դերի մասին նրա եզրահանգումները[4]։

Փոքր Ասիայի նվաճման գործընթացը, բնականաբար, եղել է նաև թուրք գիտնականների ուշադրության կենտրոնում։ Արևելագիտության մեջ քաջ հայտնի են Ի. Քաֆեսօղլուի, Մ. Ցընանչի, Մ. Քոյմենի, Ֆ. Սումերի[5] և այլոց աշխատությունները, որոնցում սակայն աչքի է ընկնում թյուրք հրոսակների հերոսացման միտումը և իրողությունների կամայական մեկնաբանությունը։ Հայ գիտնականներից Փոքր Ասիա օղուզ-թուրքմենական ներհոսքին, Հայաստանում սելջուկյանների քաղաքականությանը անդրադարձել է Սարգիս Բոռնազյանը[6]։

Ի մի բերելով աղբյուրների տեղեկությունները և քննության առնելով վերոհիշյալ աշխատությունները, կարող ենք եզրակացնել, որ Մանազկերտի ճակատամարտից հետո մինչև Կոմնենոսների դինաստիայի իշխանության գալը, առկա էին դեպի Փոքր Ասիա թյուրքական ներթափանցմանը նպաստող մի շարք կարևոր գործոններ։ Առաջինը, ինչպես արդեն նշվեց, բյուզանդական սահմանի թույլ պաշտպանվածությունն էր, որի կարևոր պատճառներից էր Հայաստանի հանդեպ XI դարում կայսրության վարած ղավթողական քաղաքականությունը և հայ բնակչությանը պարտադրած տեղափոխումները դեպի Կապադովկիա ու Կիլիկիա, որի արդյունքում կայսրության արևելյան սահմանները գրեթե անպաշտպան մնացին[7]։

XI դարում Բյուզանդիան շարունակեց անկախ հայկական պետությունների վերացման քաղաքականությունը, որի արդյունքում կայսրությունը հետզհետե յուրացրեց ամբողջ Հայաստանը։ Այսպես, 1021 թ. Բյուզանդիային միացվեց Վասպուրականը, ընդ որում վասպուրականահայության մի ստվար զանգված գաղթեց դեպի Սեբաստիայի կողմերը[8]։ 1045 թ. հույները զավթեցին Բագրատունյաց թագավորությունը՝ Անի մայրաքաղաքով։ Բյուզանդիա-

յին միացված տարածքներում բնակվող հայության մի զգալի մասը, այդ թվում ավագանին և ռազմունակ տարրը, տեղափոխվում էր դեպի Կիլիկիայի կողմերը։ Կայսրությանը միացված հայկական նահանգներում վերացվում էր դարերով ստեղծված հայկական սահմանների պաշտպանական համակարգը, որը փոխարինվում էր ոչ արդյունավետ բյուզանդականով։

Արտաքին վտանգի առջև կայսրության դիմադրելու կարողությունը կտրուկ նվազեցրեց նաև Կոնստանտին Մոնոմախի օրոք դրամական խնայողության նպատակով իրականացված Իբերիա բանակաթեմի հայ-վրացական 50 հազարանոց բանակի կազմալուծումը[9]։

Մյուս կարևոր գործոններից են անկարող կայսրերի և կառավարությունների առկայությունը, բյուզանդական մարտունակ բանակի բացակայությունը, որի հիմնական պատճառը ավանդական բանակաթեմային համակարգի և համապատասխանաբար բանակի հիմք հանդիսացող զինվորական ստրատիոտական խավի քայքայումն էր։ Արդյունքում կտրուկ աճում էր մեծաքանակ օտարազգի վարձկաններով համալրված տագմային (ոչ թե բանակաթեմերում, այլ մայրաքաղաքում կայանավորված) զորամիավորումների նշանակությունը, որոնց նվիրվածությունը կայսրության շահերին խիստ պայմանական էր, իսկ մարտունակությունը բարձր չէր։

Հաջորդ կարևորագույն գործոններից էր ներքաղաքական շափազանց անկայուն իրադրությունը, այն է՝ գահին տիրանալու համար կենտրոնական իշխանության դեմ բյուզանդական ավագանու բարձրացրած անվերջանալի ապստամբությունները, որոնցում ընդգրկված առանց այն էլ սակավաթիվ բյուզանդական ջոկատները էլ ավելի էին ջլատվում։ Ոչ պակաս կարևոր գործոններից մեկն էլ այդ ներքաղաքական պատերազմներում իբրև վարձու զինվորական ուժ կայսրության տարբեր վայրերում հայտնված թուրքմենական հրոսակների օգտագործման պրակտիկան էր, որ հետզհետե ավելի մեծ մասշտաբներ էր ստանում։

Հոդվածում փորձ է արվում ժամանակի աղբյուրների լույսի ներքո պարզաբանել այս վերջին գործոնի դերը փոքրասիական տարածքներում 1071—1081 թթ. օղուզ-թուրքմենների հաստատման գործում։

Զինվորական վարձկանության ինստիտուտը բյուզանդական բանակներում սկիզբ է առնում դեռևս նրա պատմության վաղ ժամանակներից։ Դեռևս IV—V դարերից, զինվորական ուժի մշտական պակասի հետևանքով բյուզանդական բանակներում ծառայության էին վերցվում հարևան ժողովուրդների ներկայացուցիչներից կազմված վարձկան շոկատներ։ Այդպիսի վարձու զորամիավորումները հաճախ զինվորական ծառայության էին տարվում ֆեդերատների կամ լիմիտանների կարգավիճակով, այսինքն կայսրության սահմանամերձ գոտիներում վարձատրության դիմաց պարտավոր էին մասնակցել արտաքին սահմանների պաշտպանությանը[10]։

Սակայն բյուզանդական բանակում օտարազգի վարձկանների ներգրավումը զանգվածային բնույթ ստացավ XI դարի երկրորդ կեսից, երբ քայքայված էր արաբական արշավանքներին զուգընթաց ձևավորված բանակաթեմային ռազմական համակարգը և, հետևաբար, ազատ գյուղացիական ծագում ունեցող պրոֆեսիոնալ զինվորական ստրատիոտական խավը։ Կայսրության համար արդյունքը ողբալի էր այն իմաստով, որ նա փաստորեն զրկվեց իր ավանդական զինվորական ուժից, առանց լուրջ փոխարինող ունենալու։ Այսպիսի պայմաններում կայսրերը ստիպված եղան հիմնականում հենվել օտարազգի վարձկանների վրա։ Հայտնի է թյուրք վարձկանների և մասնավորապես ուղղական վարձու շոկատների ունեցած դերը Մանազկերտի ճակատամարտում Ռոմանոս Դիոգենեսի պարտության գործում։

Իրավիճակը էլ ավելի վատթարացավ 1071 թ. ի վեր, երբ բյուզանդական կայսրերը և ավագանին, չունենալով այլ միջոց, ուղղակիորեն սկսեցին վարձել և այսպիսով ներքաշել Փոքր Ասիա ներխուժած օղուզա-թուրքմենական հրոսակներին գահի համար մղվող անվերջանալի պատերազմներում։

Ըստ Նիկեփոր Բրիենիոսի, առաջինը հենց գահընկեց արված Ռոմանոս Դիոգենեսն էր, որ, հայտնվելով ծանր ռազմական կացության մեջ (նա պատսպարվել էր Աղանայի ամրոցում՝ Անդրոնիկաս Դուկասի գլխավորած շոկատի կողմից), օգնություն խնդրեց իրեն պարտության մատնած Ալփ-Արսլանից[11]։

1073 թ. Փոքր Ասիայում ապստամբություն բարձրացրեց բյուզանդական բանակում ֆրանկ վարձկանների հրամանատար Ռուսելիոսը, որը փորձում էր իրեն ենթարկել Գալաթիայի և Լիկաոնիա-

ի գյուղերն ու քաղաքները։ Նրա դեմ ուղարկված կայսերական զորքը, որը գլխավորում էր կեսար Հովհաննես Դուկասը, պարտվեց Ռուսելիոսից, ընդ որում կեսարը դերվեց ֆրանկ առաջնորդի կողմից։ Ապստամբությունն առավել վտանգավոր դարձավ կայսերական իշխանության համար, քանի որ Ռուսելիոսին միացան նաև կայսր Միքայել VII-ի դեմ տրամադրված բյուզանդացի այլ իշխաններ։ Ապստամբ զորքը, Հովհաննես Դուկասին կայսր հրուչակելով, քիչ հետո շարժվեց դեպի Կոստանդնուպոլիս։ Այս ծանր իրավիճակում կառավարությունն այլ ելք չգտավ, քան դիմել այդ ժամանակ Արևելյան Փոքր Ասիայում իր հրոսակախմբի հետ թափառող Ալփ-Արսլան սուլթանի հրամանատարներից մեկի՝ թուրքմեն ամիրա Արտուկի օգնությանը[12]։ Կայսեր կանչով Արտուկը իր 5 հազարանոց ջոկատով եկավ Բուլթանիա և տեղակայվեց Մետաբոլե կոչվող ամրոցի մոտ, որի մոտակայքում էր գտնվում նաև ֆրանկ հրամանատարը իր զորախմբով։ Նիկոմեդիա քաղաքի շրջակայքում, Սոֆոն լեռան մոտ թուրքմենները պարտության մատնեցին Ռուսելիոսին, որը Հովհաննեսի հետ դերվեց Արտուկի կողմից։

Հարկ է նշել, որ սա աղբյուրներում Արտուկ իբն Էքսեբի, կամ Էքսուքի (տարածված են նաև Արտուխ, Օրտոկ, Ուտտուկ, Արտակ ձևերը) առաջին հիշատակությունն է[13]։ Արտուկը սերում էր թուրքմեն Դոզեր ցեղից և Ալփ-Արսլանի հրամանատարներից մեկն էր։ Հետագայում նա դարձավ Արտուկյանների թուրքմեն դինաստիայի հիմնադիրը։

Զահիր ադ-Դին Նիշափուրիի (XII դար) պարսկալեզու «Սելջուկ-նամեի» մեջ մի հիշատակություն կա, որ Մանազկերտի ճակատամարտից առաջ Ալփ-Արսլանը իր հրամանատարներին հավիտյան տիրություն խոստացավ Ռումի հողերը[14]։ Ըստ մեկ այլ, XVI դարի հեղինակ Ղաֆֆարիի հաղորդման, Արտուկին բաժին են ընկնում Մարդինը, Ամիդը, Մելիտենեն և Խարբերդը[15]։ Այս հաղորդումը, որը չի հաստատվում այլ աղբյուրների կողմից, մեր կարծիքով ուշ միջնադարյան հեղինակի նորամուծությունը կարելի է համարել։ Արտուկյանների պետությունը, որը ընդգրկում էր Դիարբեքիրը, Հիսն Քայֆը, Ամիդը, Մարդինն ու Նփրկերտը, կազմավորվեց ոչ թե Արտուկ իբն Էքսեբի օրոք, այլ XI դարի վերջին տասնամյակում և XII դարի սկզբներին նրա որդիների ջանքերով։ Հայտ-

նի է, որ այս տարածքներ Արտուկյանների գալու պահին դրանք արդեն գրավված էին սելջուկյանների կողմից[16]:

Բութանիայում Արտուկի հետ կապված իրադարձությունների մասին Ատտալիատեսը հաղորդում է, որ Ռուսելիոսին պարտության մատնելուց և Միքայել Դուկաս կայսրից վարձավճարը ստանալուց հետո Արտուկը վերադարձավ Արևելյան Անատոլիա[17]: Վրիոնիսը, մեկնաբանելով Ատտալիատեսի այս հաղորդումը, կարծիք է հայտնում, որ չնայած Արտուկի հրոսակախմբի վերադարձին, «ըստ երևույթին շատ թուրքեր մնացին տեղում և նվաճեցին մի շարք տարածքներ, որոնք չեն մատնանշվում աղբյուրների կողմից»[18]: Սա, մասնավորապես, հաստատում է Բրիենիոսի այն հաղորդումը, որ Սոֆոնի իրադարձություններից քիչ անց Հերակլիայի շրջակայքը հեղեղվել էր թուրքմեններով[19]:

Արտուկի միջամտությունը, սակայն, չօգնեց Միքայելի կառավարությանը հաշվեհարդար տեսնել Ռուսելիոսի հետ: Փրկագին վճարելով, նա ազատվեց Արտուկի գերությունից և իր գործողությունները տեղափոխեց Արմենիակների բանակաթեմ, ուր ասպատակությունների շնորհիվ հարկավճարություն էր պարտադրում տեղացի բնակչությանը: Միայն 1074 թ. ապագա կայսր Ալեքսիոս Կոմնենոսին հաջողվեց վերջ դնել Ռուսելիոսի գործողություններին, այն էլ այդ ժամանակ Ամասիայում թափառող Տուտակ, կամ Տուտախ[20] անունով մի թուրքմեն ամիրայի շնորհիվ, որին խոշոր վարձավճար տրվեց: Ըստ Աննա Կոմնենայի, Թութակը իր ահագին ղորքով Բյուզանդիա էր եկել ասպատակությունների և թալանի նպատակով[21]:

Փոքր Ասիայում օղուզա-թուրքմենական ներթափանցման հետ սերտորեն առնչվում է Ռումի Սելջուկյանների պետության կամ Նիկիայի սուլթանության ձևավորումը:

1077 թ. իրենց թուրքմենական հրոսակախմբերով Նիկիա քաղաքի շրջակայքում հաստատվեցին Գթլմուշի (այլ կերպ նաև՝ Քութալմիշ, Քութլումուշ և այլն) որդիներ Սուլեյման և Մանսուր սելջուկյան ամիրաները:

Սուլեյմանն ու Մանսուրը, իրենց հոր՝ 1064 թ. սուլթանի դեմ բարձրացրած ապստամբությունից հետո, որի արդյունքում Գթլմուշը սպանվեց, ավանդական թշնամական հարաբերությունների մեջ էին գտնվում Ալփ-Արսլանի հետ և այդ իսկ պատ-

ճառով մշտապես հալածվում էին վերջինիս կողմից։ Ուստի, բացի տարածություններ զավթելու հեռանկարներից, Գելմուշի որդիների՝ Փոքր Ասիայում հայտնվելը նրանց հնարավորություն էր տալիս խուսափել սելջուկյան սուլթանի ճնշումներից։

Հեղինակներից մի քանիսը, մասնավորապես Սկիլիցեսը, Ատտալիատեսը, ինչպես նաև Արուլֆարաջը, Սուլեյմանի ու Մանսուրի՝ Փոքր Ասիայում հայտնվելը, բացատրում են Մելիքշահի հետ իբր վերջիններիս կնքած այն համաձայնությամբ, ըստ որի նրանք դադար կտան սուլթանի դեմ իրենց մշտական ապստամբությունների և ղրծողությունները կտեղափոխեն Բյուզանդիա՝ իրենց համար տիրույթներ կորզելու և միաժամանակ Փոքր Ասիան Սելջուկյաններին պատկանող հող դարձնելու համար[22]։

Մասնագիտական գրականության մեջ, մասնավորապես Ք. Է. Բոսվորտը, կասկածներ է հայտնել այս վարկածի շուրջ։ Բոսվորտը դտնում է, որ սուլթանը չէր կարող իր ձեռքով Սուլեյմանին և Մանսուրին նշանակել Փոքր Ասիայի սելջուկյանների կառավարիչ[23]։ Մենք համամիտ ենք Բոսվորտի հետ, և այդ է վկայում Մելիքշահի հանձնարարությամբ Գելմուշի որդիների դեմ Բորսուկի գլխավորած արշավանքները[24], որի հետևանքով սպանվեց Մանսուրը։ Բացի դրանից, Մելիքշահը հազիվ թե գիտակցաբար մի ահռելի տարածք հանձներ Սուլեյմանի հսկողությանը, որը կնպաստեր իրեն մրցայից սելջուկյան ճյուղի հզորացմանը։

Աղբյուրներում Սուլեյմանի մասին առաջին անդամ հիշատակվում է հետևյալ իրադարձությունների հետ կապված. կայսր Միքայել VII Դուկասը վարձում է Սուլեյմանին խոշոր ավատատեր Նիկեփոր Բոտանիատեսի ապստամբությունը ճնշելու նպատակով։ Սակայն Բոտանիատեսին հաջողվում է իր կողմը գրավել Սուլեյմանին[25]։ Սրա շնորհիվ Բոտանիատեսը հնարավորություն ստացավ մուտք գործել Նիկիա, որը 1078 թ. ամբողջովին գտնվում էր Սուլեյմանի թուրքմենական զորախմբերի վերահսկողության տակ։ Ի վերջո, Սուլեյմանի օգնությամբ Բոտանիատեսը կարողացավ հաստատվել բյուզանդական գահին։

Ատալիատեսի հաղորդմամբ՝ Բոտանիատեսի ապստամբության արդյունքում փոքրասիական մի շարք քաղաքներում, այն է՝ Նիկիայում, Քաղկեդոնում, Նիկոմեդիայում, Պիլեում, Խրիսուպոլիսում, Ռուֆինիայում և Կյուզիկոսում, տեղակայվեցին թյուրքական կայա-

զորներ[26]: Սա, անկասկած, Սուլեյմանին հնարավորություն ընձեռեց հաստատվել այդ քաղաքներում և հետագայում ընդգրկել դրանք իր պետության մեջ։ Փաստորեն, առաջին անգամ օղուզները մուտք գործեցին փոքրասիական քաղաքներ։ Մինչ այդ թյուրքերը կուտակվում էին միայն գյուղական վայրերում։ Թե ինչ հետևանք ունեցավ սա, կարելի է եզրակացնել այն բանից, որ միայն 1090-ականների սկզբներին Ալեքսիոս Կոմնենոսին հաջողվեց վերադրավել այս քաղաքներից մի քանիսը[27]:

Սուլեյմանի մասին տեղեկություններ է հաղորդում նաև Մատթեոս Ուռհայեցին, որը նրան անվանում է «մի ոմն ամիրա Սուլիման Գելմուշի որդին, որ բնակվում է բյութանացվոց Նիկիա քաղաքում»[28]: Սուլեյմանի մասին Ուռհայեցին առաջին անգամ հիշատակում է 1084 թ. նրա կողմից Անտիոքի գրավման կապակցությամբ, երբ Ռումի սելջուկյանները արդեն հիմնավորապես հաստատվել էին Փոքր Ասիայում։

Ատալիատեսը մեզ տեղեկացնում է, որ Սուլեյմանի հրոսակներին Բոտանիատեսը համարում էր կայսերական զորքի անբաժանելի մասը, նրանց վճարում էր օրավարձ և ընդհանուր վարձ, իսկ թուրքմեն առաջնորդները բարձր կոչումներ էին ստանում, ինչպես օրինակ հանրահայտ թյուրք ամիրա Չականը իր պատանեկության օրոք[29]:

Մինչև Ալեքսիոս Կոմնենոսի գահ բարձրանալը, 1081 թ. Փոքր Ասիայում բռնկվեց մի նոր ապստամբություն, որն այս անգամ ղեկավարում էր խոշոր ֆեոդալ Նիկեփոր Մելիսենոսը։ Բրիենիոսը հաղորդում է, որ այդ ավատատերը նույնպես հիմնականում ապավինում էր թյուրքերի օգնությանը, որոնց տնօրինությանը նա հանձնեց Փոյուգիայի, Գալաթիայի և Ասիայի (Արևմտյան Փոքր Ասիա) մի շարք քաղաքներ[30]:

Մատթեոս Ուռհայեցու վկայությամբ Մանազկերտի ճակատամարտից հետո Փոքր Ասիայում փաստացի անկախ պետություն հիմնած հայազգի Փիլարտոս Վարաժնունին (Ֆիլարետ Վրախամիոս) Կիլիկիայի հայ իշխաններին իրեն ենթարկելու նպատակով նույնպես երբեմն դիմում էր թյուրք ամիրաների ծառայությանը։ Այսպես, Սասունի Թոռնիկ իշխանի հետ նա հաշվեհարդար տեսավ Նրփերկերտի Ամր Քափր անունով մի թյուրք ամիրայի օգնությամբ[31]:

Այսպիսով, կասկածից վեր է, որ Մանազկերտի ճակատամարտից հետո բյուզանդական կայսրերի և ապստամբ ֆեոդալների կողմից գահի համար մղված պատերազմներում օղուզ և թուրքմեն վարձկան ռազմական ուժի կիրառման պրակտիկան թյուրքերին հնարավորություն ընձեռեց էլ ավելի խորը թափանցելու այդ տարածաշրջանի տարբեր վայրեր։ Փաստորեն, միջամտելով միջբյուզանդական ներքին պատերազմներին, օղուզները և թուրքմենները, անշուշտ, հնարավորություն ստացան վերահսկելու Փոքր Ասիայի կարևորագույն ճանապարհներն ու մասամբ հիմնվելու Փոքր Ասիայի դեռևս իրենց կողմից չգրավված շրջաններում, որոնք հետագայում մի փոքր ուշքի եկած կայսրության դեմ պայքարի հենակետեր դարձան։ Բյուզանդական ավագանու անհեռատես քաղաքականության հետևանքով Փոքր Ասիայի մի զգալի մասը հայտնվեց օղուզ և թուրքմեն հրոսակների ձեռքին։ Ավելորդ չի լինի նշել, որ հենց այս պահից սկսած թյուրքական տարրը սկսեց հետզհետե ոչնչացնել, դուրս մղել և թյուրքացնել տեղացի հույն և հայ բնակչությանը։

Չնայած Փոքր Ասիայի կարևոր քաղաքներից շատերը դեռևս գտնվում էին բյուզանդացիների ձեռքին, այնուամենայնիվ, մեկուսացած էին իրարից, քանի որ նրանց կապող գլխավոր ճանապարհները գրեթե լիովին անցել էին օղուզական և թուրքմենական հրոսակների և զինվորական ջոկատների վերահսկողության տակ։

Անհրաժեշտ է նշել, որ թեև առաջիկա տասնամյակներում (1081—1176 թթ.) Ալեքսիոս և Հովհաննես Կոմնենոսների վարած եռանդուն քաղաքականության, ինչպես նաև նպաստավոր արտաքին իրավիճակի և, մասնավորապես, խաչակրաց արշավանքների շնորհիվ թյուրքերի հսկողության տակ գտնվող Փոքր Ասիայի մի մասը հնարավոր եղավ վերանվաճել, այսուհանդերձ, թուրքմեններին նորանոր մեծաթիվ խմբերի ներհոսքը Փոքր Ասիա պայմանավորեց թյուրք նվաճողների զինվորական ուժի քանակային առավելությունը բյուզանդացիների նկատմամբ։ Չնայած երկրի հզորության բարձրացման ուղղությամբ Կոմնենոսների ջանքերին, քայքայված բյուզանդական տերությունը այդպես էլ չկարողացավ թյուրքական ներխուժման առաջն առնել։

1176 թ., Մանազկերտի ճակատամարտից հարյուր տարի հետո, Մյուրոկեֆալոնի ճակատամարտում բյուզանդական զորքի պարտությունը վերջ դրեց Փոքր Ասիայում թյուրքական տիրապետության

վերացման հետ կապված հույսերին և, ընդհակառակը, ապահովեց թյուրքերի միակողմանի տիրապետությունը Փոքր Ասիայի գրեթե ամբողջ տարածքում։

Փոքր Ասիայի վերջնական կորստից հետո Բյուզանդիան դադարեց համաշխարհային տերություն լինելուց և վերածվեց տեղական նշանակության մի բալկանյան երկրի, որին առաջիկա երեք հարյուրամյակի ընթացքում վիճակված էր նվաճվելու օսմանյան տերության կողմից։

Ի մի բերելով աղբյուրների տվյալները, կարելի է եզրակացնել, որ նախքան Մանազկերտի ճակատամարտը, և հատկապես նրանից հետո, բյուզանդական ավագանու ապավինումը թյուրք վարձկանների ռազմական ուժին ոչ միայն զգալի վնաս հասցրեց Բյուզանդիայի պետական շահերին, այլև մեծապես նպաստեց օղուզ և թուրքմեն տարրի ներթափանցմանը Փոքր Ասիա և սկիզբ դրեց աստիճանական թյուրքացման գործընթացին։

TIGRAN MIKAYELYAN

1071—1081 TURKISH PENETRATION INTO ASIA MINOR AND BYZANTINE INTERNAL STRIFES

The Turkish penetration into Asia Minor began soon after Manazkert battle when Byzantine frontier defense system was in total collapse. Among factors which enabled the Turkish penetration into inner Anatolia was the practice of using Oghuz and Turcoman bands which entered Byzantium to pillage in internal strifes for throne by Byzantine nobility.

Thus, Turkoman emir Artuk ibn Ekseh, future founder of Artukid dynasty, was hired by Michael VII to fight Norman mercenary commander Roussel de Bailltul who was trying to establish itself in Galatia and Lycaonie by plundering its cities and towns. For this purpose Artuk's band appeared in Bythinia and defeated Norman leader. As a result Turkomans particularly swarmed the region around the Black see.

The Turkish penetration in to Asia Minor prior to Comnene dynasy is closely related with the origins of Seljuqid Sultanate of Rum which became possible in certain level due to recruitment of Sulayman ibn Qutalmish first by Emperor Michael VII and then by rebellious magnat Nicephorus Botaniates. Due to Sulayman's support Botaniates succeeded in acquiring of By-

zantine throne The strife of Nicephorus installed Turks as garrisons in cities of Nicaea, Chalcedon, Nicomedia, Pylae, Chrysopolis, Ruphinianae, Cyzicus. This was first time when the Oghuz entered cities; before this they were crowding exclusively in rural areas.

As the result of new strife for the throne by Byzantine magnat Necephorus Melissenus many towns of Asia (Western Asia Minor), Phrygia and Galatia actually wefe given to Turkoman control.

Thus Byzanine internal strifes after the Manazkert battle enabled the Oghuz and Turkoman bands to penetrate further into the regions not accessible for them before and turn them into the bases for their gradual expansion to the considerable part of Asia Minor.

ПРИМЕЧАНИЯ

[1] Анна Комнена. Алексиада, Вступительная статья, перевод и комментарии В. И. Любарского, М., 1965, с. 136.

[2] J. Laurent, Byzance et les Turcs Seldjoucide en Asie Minuere, Nancy, 1914. Idem. Byzance et les origines du sultanat de Roum, Melanges Charles Diehl I, Paris, 1930 (այսուհետև J. Laurent, Les origines.). Ս. Բոռնազյան, *Հայաստանը և սելջուկները XI—XII դդ., Երևան, 1980։*

[3] C. Cahen, La premiere penetration turque en Asie-Mineure (Seconde moitie du Xi siecle), Byzantion, v. XXVIII, 1948. Idem. The Turkish Invasion: the Selchükids, in History of the Crusades, ed. K. Setton, vol. I, 1955.

[4] S. Vryonis, The Decline of Medieval Hellenism in Asia Minor and the Process of Islamisation from the Eleventh through the Fifteenth Century, L. A., 1971, էջ 108.

[5] M. F. Köprülü, Anadolu Selcuklulari tarihinin yerli kaynaklari, TTKB, 1943, c. VII, № 27; M. H. Yinanc, Turkiye tarihi. Selcuklular devri. I. Anadolunun fethi, Istanbul, 1944; I. Kafesoglu, Sultan Meliksah devrinde Selcuklu Imparatorlugu, Istanbul, 1953; M. A. Koymen, Selcuklü devri Türk tarihi, Ankara, 1963; F. Sümer, Malazgirt savasina katilan Türk beyleri,— «Selcuklü Arastirmalari Dergisi» IV, Ankara, 1975.

[6] Ս. Բոռնազյան, *Հայաստանը և սելջուկները XI—XII դդ.։*

[7] *Հայ ժողովրդի պատմություն, հ. III (Հր. Բարթիկյան, Հայաստանը բյուզանդական տիրապետության ներքո, Հայաստանը զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում (IX դ. կեսերից մինչև XIV դ. կեսերը), Երևան, 1976, էջ 430—431։*

[8] *Հայ ժողովրդի պատմություն, հ. III, էջ 143։*

[9] *Նույն տեղում, էջ 432։*

[10] История Византии, т. I, М., 1967. с. 140; Г. Г. Литаврин. Византийское общество и государство в X—XI вв., М., 1977, с. 238.

[12] Michaelis Attaliotae Historia, recognovit Immanuel Bekkerus. Bonnae,

[11] Nicephori Bryennii Commentarii. Sec. A Nenncke, Bonnoe, 1836, էջ 57 (այսուհետև Br.).

1853, էջ 190, Հովհաննես Սկիլիցես. Պատմություն. թարգմ. Հր. Բարթիկյանի, Երևան, 1991, էջ 249։

[13] C. Cahen, La premiere penetration, էջ 53.

[14] Ali Sevim, Artuklularin soyu ve Artuk Bey'in siyasi faaliyetleri, Türk Tarih Kurumu Belleten, XXVI, 1962. էջ 125.

[15] *Նույն տեղում։*

[16] К. Босворт, Мусульманские династии, М., 1971, с. 167.

[17] Attaliates, էջ 184.

[18] Vryionis, The Decline, էջ 111.

[19] Br. 93—95.

[20] Br 66։ *Բրիենիոսը այդ ամիրային կոչում է Թուրուշ, ինչի կլ. Կահենի կարծիքով անհնարին է, քանի որ Ալփ-Արսլանի որդի Թուրուշը այդ ժամանակ մանկահասակ էր։*

[21] Анна Комнена, էջ 58—61.

[22] *Տե՛ս* J. Laurent, Byzance et l'origine du sultanat de Roum, Melanges Charl Diehl, 1930, էջ 179.

[23] C. E. Bosworth, The Political and Dynastic History of the Iranian World (AD. 1000—1217) In: The Cambridge History of Iran, էջ 960.

[24] Abul Faraj Bar Hebraeus, Chronography, Irans. by W. Budge, London, 1932, էջ 227.

[25] Սկիլիցես, էջ *264։ Սկիլիցեսի Շարունակողը Սուլեյմանին սխալմամբ անվանում է Գիլմուշ։*

[26] Attaliates էջ 263—268.

[27] Анна Комнена, էջ 199—200.

[28] Մատթեոս Ուռհայեցի, *ժամանակագրություն, Աշխարհարար թարգմանություններ և ծանոթություններ Հ. Բարթիկյանի, Երևան, 1991, էջ 241։*

[29] Анна Комнена, էջ 220, Laurent, Byzance et les origines, էջ 181.

[30] Br. էջ 158.

[31] Մատթեոս Ուռհայեցի, *էջ 224—226։*